«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀՖՖ Բողոքարկման կոմիտեի 2023 թվականի օգոստոսի 11-ի նիստի № 1 որոշման

քաղվածք

Նախագահ	Արա Մկրտչյան
Փոխնախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Ռուբինա Մխիթարյան
	Կարեն Ասատուրյան
	Թամարա Չախոյան

ՀՖՖ Բողոքարկման կոմիտեն, քննության առնելով «Շիրակ ՖԱ» ՀԿ-ի 05. 06. 2023թ. -ին ներկայացված բողոքը՝ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի՝ 18. 05. 2023թ. -ի որոշման դեմ, որոշեց՝

1. ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի՝ 18.05.2023թ.-ի նիստի 1-ին, 3-րդ, 4-րդ կետերով կայացված որոշումները թողնել անփոփոխ։
2. ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի՝ 18.05.2023թ.-ի նիստի 2-րդ կետով կայացված որոշումը (այսուհետ՝ Որոշում) փոփոխել և սահմանել հետևյալ պատասխանատվության միջոցը.
   «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի՝ 300,000 ՀՀ դրամի չափով և «Շիրակ» թիմի գլխավոր մարզիչ Էդգար Թորոսյանի նկատմամբ սահմանված 5 (հինգ) ամիս որակազրկման (2023 թվականի մայիսի 18-ից մինչև հոկտեմբերի 18-ը ներառյալ) չկրած մասը՝ այն է 2 ամիս 7 օր, թողնել անփոփոխ: Միևնույն ժամանակ այն պայմանական չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան 3 (երեք) ամիս ժամկետով, որի սկիզբը հաշվել 2023 թվականի օգոստոսի 11-ից:
3. Բողոքարկման մարմնի որոշումները վերջնական են և ենթակա չեն բողոքարկման։

ՀՖՖ Բողոքարկման կոմիտեի նախագահ՝

8/15/2023

X

ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

Արա Մկրտչյան

Ծանուցում

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգ (2023թ. խմբագրություն), Հոդված 23

- Եթե ֆուտբոլային սուբյեկտի կողմից պատասխանատվության միջոցի պայմանական կիրառման ընթացքում թույլ է տրվում համանման կարգապահական խախտում, ապա ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշմամբ սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցը կիրառվում է: Միևնույն ժամանակ այդ կարգապահական

միջոցը զումարվում է նոր կատարված կարգապահական խախտման հետևանքով կիրառվող միջոցին։